

**ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

**ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇ» ԵՎ ՇԵՔՍԱԿԻՐԻ «ՌՈՄԵՈ ԵՎ ՋՈՒԼԻԵՏ»
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.152

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածում ներկայացված է Երկու նշանակալի գրական ստեղծագործությունների համեմատական ուսումնասիրություն՝ Հովհաննես Թումանյանի «Անուշ» և Ուիլյամ Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ստեղծագործությունների: Ուսումնասիրվում են թեմատիկ և նարատիվ նմանություններն ու տարբերությունները Երկու գործերի միջև՝ ուշադրություն դարձնելով սիրո պատկերմանը, հերոսների ներքին խառնաշփոթին և այն հասարակական սահմանափակումներին, որոնց նրանք բախվում են: Երկու հեղինակներն էլ նկարագրում են սիրո հետ կապված խոր զգայական ապրումները՝ ընդգծելով անհատական ցանկությունների և հասարակական նորմերի միջև եղած լարումը: Վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես «Անուշ»-ն ու «Ռոմեո և Ջուլիետ»-ը առնչվում են սիրո և զոհաբերության համընդհանուր թեմաներին՝ ի վերջո հանգեցնելով հերոսների ողբերգական ճակատագրերին: Ուսումնասիրությունը ընդգծում է Շեքսպիրի ստեղծագործության երկարատև ազդեցությունը Թումանյանի գրականության վրա և մարդկային ընդհանուր զգացումները, որոնք արտացոլված են նրանց նարատիվներում:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել Թումանյանի «Անուշ» և Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ստեղծագործությունների համեմատական բնութագիրը: Սույն նպատակից ելնելով՝ մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել «Անուշ» և «Ռոմեո և Ջուլիետ» ստեղծագործություններին բնորոշ հատկանիշները, սյուժետային ընդհանրական գծերը,
- Վեր հանել երկու հեղինակների ստեղծագործություններին բնորոշ գաղափարական շերտերը:

Քանալի բառեր և արտահայտություններ. համեմատական գրականություն, սեր, հոգեբանություն, հերոսուհիներ, սյուժե, կյանքի օրենքներ, հասարակություն, նահապետական բարքեր, համամարդկային արժեքներ, տառապանք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ-անգլիական գրական առնչությունները դարերի պատմություն ունեն՝ աստիճանաբար ստանալով համակողմանի ծավալ ու հարուստ բովանդակություն: Այս առնչություններն առաջ եկան հայ նոր գրականության սկզբնավորման հետ միաժամանակ՝ նպաստելով հայ նոր գրականության կազմավորման, բազմազան թեմաների ընդգրկման և հարստացման, համամարդկային գաղափարների շոշափման գործին: Ասվածը փաստող փայլուն օրինակ է Թումանյան-Շեքսպիր գրական առնչությունները, որոնց մասին գրականագիտության մեջ շատ հետաքրքիր դիտարկումներ կան: Թումանյանի և Շեքսպիրի գրական գործունեությունը մի շարք աղերսներ ունեն: Իբրև գրական առնչությունների դրսևորման օրինակ՝ կարելի է դիտարկել մասնավորապես Թումանյանի «Անուշ» պոեմը և Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության ընթացքում կիրառում ենք համեմատական գրականության մեթոդը, որը հնարավորություն է տալիս վերլուծել երկու ստեղծագործություններ՝ Հովհաննես Թումանյանի «Անուշ» և Ուիլյամ Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», ինչպես նաև դրանց միջև առկա համանման և տարամետ կողմերը: Ուսումնասիրությունը հիմնված է երկու ստեղծագործությունների սյուժետային կառուցվածքի, կերպարների զարգացման, թեմաների և գաղափարական շերտերի համեմատության վրա: Վերլուծության ընթացքում

ուշադրություն ենք դարձնում նաև պատմական, մշակութային և սոցիալական համատեքստերին, որոնք ազդել են երկու հեղինակների ստեղծագործական աշխարհայացքի ձևավորման վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Թումանյանի ստեղծագործական որոնումների վրա մեծ հետք է թողել Շեքսպիրը: Ըստ Թումանյանի՝ Շեքսպիրը գրող-արվեստագետի իդեալն էր, որի մեջ համամարդկայինն ու ազգայինը կազմում են մի ներդաշնակ ամբողջություն: «Գերազանց է բրիտանական հանճարի փայլը, որը իր ճաճանչները մի կողմից զարկում է մինչև Էսքիլեսի ու Սոֆոկլեսի ժամանակները, մյուս կողմից՝ դեպի գրականության ապագա: Եվ ամեն մի գրող, ինչ աշխարհում էլ ասպարեզ իջնի, տեսնում է իր ուղին արդեն լուսավորված նրա շողերով, և գրեթե անխտիր, շատ քիչ բացառությամբ, ամենքն էլ խոնարհվում են նրա առջև»: Թումանյանի գնահատմամբ՝ Շեքսպիրը եղել է համամարդկային մտքի կատարյալ թռիչքներից մեկը, որը միացնում և որից բաժանվում են գրականության բոլոր ճանապարհները: «Գյոթեն հանճարեղ ստեղծագործող է, բայց Շեքսպիրն ավելի մեծ է: Նա զարհուրելի թափ ունի, խորություն, ուժ, նրբություն: Նա տարերային է, նա ինքը բնությունն է: Բնության բոլոր երևույթները կան նրա մեջ՝ և՛ կայծակ, և՛ հեղեղ, և՛ արև, և՛ ծով, և՛ ամեն ինչ, բայց իշխող արևն է: Շեքսպիրն ինքը տիեզերք է», - ասում էր Թումանյանը (**Թումանյան Հ., 1995**):

Շեքսպիրի և Թումանյանի երկու մեծարժեք ստեղծագործություններն առաջին հերթին ընդգծում են համամարդկային ընդգրկումներ ունեցող մի թեմա՝ մեծագույն սերը, դրա խորհուրդը, որը պայմանավորում է մարդկային հոգեվիճակներ: Անուշը և Ջուլիետը միմյանցից էականորեն տարբերվում են իրենց կենցաղով, ապրած ժամանակով, բարքերով ու սովորույթներով, սակայն ընդհանուր շատ եզրեր կան նրանց հոգեբանության շերտերում: Ե՛վ Շեքսպիրը, և՛ Թումանյանը տեսանելի են դարձնում դեռ նոր-նոր ձևավորվող սիրո առաջին թրթիռները, սիրո առաջին տազնապն ու անհանգստությունը, որը սիրահարին կտրում է հողից, հասցնում երկինք՝ դեպի վառ աստղերը: Սիրտը դուրս է թռչում

մարմնից, ուզում թևածել լույսերում: Հոգու սլացքի այս վեհագույն պահն է բանաստեղծականացվել երկու գրողների երկերում: Մի կողմում հայոց նահապետական գյուղի բարձր լեռների փեշերին սեր ապրող Անուշն է, մյուս կողմում՝ քաղաքակիրթ աշխարհի մի անկյունում սիրո հուզաթաթալ թրթիռներով պարուրված Ջուլիետը: Նույնն են նրանց հոգեվիճակները՝ սիրուց անհանգիստ, անբացատրելի զգացումներով.

-Ախ՝ սիրտըս, նանի՛, չըգիտեմ ընչի,

Մին լաց է լինում սևակնա՛ծ, տըխո՛ւր,

Մին թև է առնում, ուզում է թըռչի,

Չըգիտեմ՝ թե ո՛ւր, չըգիտեմ՝ թե ուր.... (Թումանյան Հ., 1995)

Ներքին խռովքի նույն զգացումներն են պատել նաև Շեքսպիրի հերոսուհուն: Սիրո քաղցր անուրջներում է նա, և սպասման ցավից ելք գտնելու համար նրա հոգին մղվում է դեպի խորհրդավոր հեռուները, սակայն կասկածները չեն փարատվում (նույն կասկածը, սիրո ալիքներում ավելին ըմբռնանելու ցանկությամբ է համակված նաև Անուշը), և կրկին անհանգստության շերտեր են թափանցում հոգու խորքը: Եվ այդ խորհրդավոր ափերում Ջուլիետը փորձում է մերթ ցավի ու մորմոքի եզրերը գտնել, մերթ սիրո անհագ ծարավը հագեցնել, մերթ աստվածային ուժ է տենչում սիրո հրդեհում այրվելու համար.

Եկ, պարկե՛շտ գիշեր,

Եվ դու, սևազգեստ ամոթխած տիկին,

Եվ սովորեցրու՛ ինչպե՛ս վաստակեմ խաղի մեջ մի սեր,

Եկ դու, քողարկիր քո սև թիկնոցով իմ արյունը կույս,

Որ թշերիս մեջ թափահարվում է. կորո՛վ տուր հոգուս,

Որ անզուսպ սերը պարզ զգաստություն համարի միայն (Շեքսպիր Վ., 1964):

Թե՛ Թումանյանը, թե՛ Շեքսպիրը հերոսների ազգային հոգեբանությամբ ու բախտով պատկերել են իրական կյանքում սիրո տառապանքի համամարդկային հոգեվիճակներ: Միջավայրում իշխող ներհակությունները՝ մի դեպքում նահապետական բարքերն ու սովորույթները, մյուս դեպքում՝ հայտնի

գերդաստանների հինավուրց վեճը և դրանից ծնված ատելությունը, խոր հակասություններ են առաջ բերում սիրո եթերային աշխարհում, ուր կորչում են իրականության և երազի սահմանները: Սիրո ցավն ու տառապանքը Անուշի և Ջուլիետի հոգում ծնունդ են առնում՝ հակադրվելով կյանքի օրենքներին: Նրանց համակում է սիրո կորստի մտավախությունը, նրանց սիրտը կարծես զգում է մի ինչ-որ մոտավուտ վտանգ. ահա Անուշի խոսքերը՝

Ա՛խ իմ բախտը կանչում է ինձ,

Չեմ հասկանում՝ դեպի ուր...

Դողում է պաղ նըրա ձենից

Իմ սիրտը սև ու տխուր **(Թումանյան Հ., 1995):**

Մոտավուտ ցավի նախազգացումը փոթորկում է Անուշի հոգին: Սիրո երջանիկ ակնթարթները մարում են կորստյան տագնապի ալիքներում: Նույն հոգեվիճակն է ապրում նաև Ջուլիետը. փոթորկված է հոգին, տագնապում է սիրտը, և այդ տագնապող փոթորկումների մեջ բախվում են երազն ու իրականությունը, շոշափելին ու երևակայականը.

Աստվա՛ծ իմ. հոգիս չարագուշակ է:

Հիմա, որ ցած ես, կարծես այստեղից

Ես քեզ տեսնում եմ գերեզմանի մեջ

Կամ աչքս է խաբում, կամ դու ես գունատ **(Շեքսպիր Վ., 1964):**

Կյանքի օրենքներն արգելք են դառնում սիրող սրտերի առջև: Գյուղական աշխարհի նահապետական սովորույթների դեմ է կանգնում Անուշի սերը, իշխանական բարքերի, քաղաքակիրթ աշխարհի օրենքների դեմ լեռանում է սիրո դյուբիս ալիքներում թևածող Ջուլիետի սիրտը: Հզոր սերն է Անուշին սիրած տղայի հետ փախուստի ուժ տալիս, Ջուլիետին՝ դամբարան տանող թմրեցուցիչ հյուսիք խմելու կարողություն: Անուշը շատ լավ գիտեր իր արարքի հետևանքը՝ օտարում իր միջավայրից, բայց սիրո լույսը մեղմում է այդ հոգեվիճակը: Նույն լույսի հրդեհում է մեծագույն համարձակություն ձեռք բերում Ջուլիետը՝ գիտակցելով մահաշունչ դամբարանում կենդանի հայտնվելու մտքի սարսափը: Երկու

գրողների հերոսուհիների կյանքում՝ այդ իրարամերժ ապրումների շրջանում, հանդես են գալիս խորհրդատու կերպարներ՝ հանձինս Զուլիետի դայակի և անցվոր եղբոր: Երկուսն էլ հերոսնուհիներին հանդիպադրվում են կյանքի բնական ընթացքին հետևելու իրենց խորհուրդներով՝ որպես կյանքի շարունակման տրամաբանական պահանջ:

Ռոմեոն արդեն աքսորի մեջ է.

Չի հանդգնի նա այլևս գալ ու պահանջել քեզ:

Լավն այն է, որ ամուսնանաս կոմս Պարիսի հետ:

Հոգովս եմ երդվում կբախտավորվես

Դու քո այս երկրորդ ամուսնության մեջ (**Շեքսպիր Վ., 1964**):

Նույն խորհուրդն է տալիս Անուշին անցվոր եղբայրը.

Ինչու՞ իզուր հանգցնում ես

Ջահել կըրական աչքերիդ:

Նըրա անբախտ շիրմի վըրա

Պաղ ջուր ածա աղբյուրի,

Դու էլ գընա, նոր սեր արա,

Էսպես է կարգըն աշխարհի (**Թումանյան Հ., 1995**):

Պատահական չէ, որ Թումանյանը 1916 թ. պոեմի հիմնական մշակմանը կատարում է մի լրացում՝ անցվոր եղբոր և Անուշի զրույցը: Թումանյանը, գեղարվեստական պատումում այս պատկերը ավելացնելով, ասելիքի ենթաշերտերում ավելի խոհափիլիսոփայական շերտեր է բացել՝ շեշտադրելու համար հավերժական սիրո և ապրելու հրամայականի բախման սահմանագծին սիրո ամենահզոր ուժի խորհուրդը. «Նա էլ Շեքսպիրի նման զգացել է հավերժական սիրո վիթխարի ուժը, որի առջև խոնարհվում է անգամ երկրային ճանապարհն անցնելու մարդկային բնական ձգտումը» (**Արզումանյան Ա., 2020**):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով Հովհաննես Թումանյանի «Անուշ» և Ուիլյամ Շեքսպիրի «Ռոմեո և Զուլիետ» ստեղծագործություններին բնորոշ

հատկանիշները, սյուժետային ընդհանրական գծերը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Թե՛ Շեքսպիրը, թե՛ Թումանյանը տեսանելի են դարձնում սիրուց ծնվող առաջին թրթիռներն ու տազնապները, իրական ու երազային կյանքի բախումը, նոր՝ խորհրդավորության զգացումը, երբ սիրուց հոգին ճախրում է երկնքում ու երկնքից վեր:
2. Երկու գրողների հերոսուհիների մոտ ընդգծվում է կանխազգացման հատկությունը, երբ սիրահար սիրտն ավելին է տեսնում ու կանխազգում, տազնապներ ունենում: Սա նաև նախապատրաստում է երկու ստեղծագործություններն ընթերցողներին դեպքերի հետագա ընթացքին ու զարգացումներին:
3. Երկու ստեղծագործություններում հակադրվում են հավերժական սիրո և կյանքի՝ ապրելու ու նոր սեր ունենալու հրամայականի հարկադրումը: Մեծ սիրո առջև անգոր է անգամ իրական կյանքի այն հրամայականը, թե սիրո կորստից հետո պետք է ապրել ու նոր սեր գտնել:
4. Երկու ստեղծագործություններում էլ հերոսուհիները պայքարում են հասարակական ընդունված օրենքների դեմ՝ հանուն իրենց սիրո: Այդ պայքարում սիրահարները կործանվում են՝ զոհ գնալով օրենքներին: Սակայն երկրային տարածքներում չկայացած ու չընդունված մաքուր ու ազնիվ սերը հավերժանում է երկնային անսահմանության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Արզումանյան Ա. (2020)**, Սիրապատումի հանգրվաններ. Հովհաննես Թումանյան և Վիլյամ Շեքսպիր, «Հայագիտության հարցեր», Երևան, №1 (19), էջ 150-162:
2. **Թումանյան Հ. (1995)**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
3. **Թումանյան Ն. (1969)**, Հուշեր և զրույցներ, Երևան, «Լույս» հրատ.:

4. **Շեքսպիր Վ. (1964)**, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, Հայպետհրատ:

REFERENCES

1. **Arzumanyan A. (2020)**, Sirapatowmi hangrvanner. Hovhannes T'owmanyanyan & Vilyam Sheqspir /Lodgings of Love Stories: Hovhannes Tumanyan and William Shakespeare/, "Armenological Issues", Yerevan, № 1(19), pages 150-162.
2. **Tumanyan H. (1995)**, Erkeri liakatar jhoghovac'ow /Complete collection of works/, vol. 7, Yerevan, «Gitutyun» publishing house of the National Academy of Sciences of the Republic of Armenia.
3. **Tumanyan N. (1969)**, Howsher ev zrowycner /Memories and conversations/, Yerevan, «Luys» publishing house.
4. **Shakespeare W. (1964)**, Y'ntir erker /Selected Works/, Vol. 1, Yerevan, Haypethrat.

Кнарик Арутюнян, Нарине Киракосян

**Сравнительная характеристика произведений Туманяна «Ануш» и Шекспира
«Ромео и Джульетта»**

Заключение

Ключевые слова и выражения: *сравнительное литературоведение, любовь, психология, героини, сюжет, законы жизни, общество, патриархальные обычаи, общечеловеческие ценности, страдание.*

В данной статье проводится сравнительное исследование двух выдающихся литературных произведений: «Ануш» Ованеса Туманяна и «Ромео и Джульетта» Уильяма Шекспира. Цель исследования — выявить как сходства, так и различия в тематике, композиции и психологической глубине образов главных героев. Особое внимание уделяется изображению любви как мощной и трагической силы, вызывающей внутренние переживания и конфликт между личными чувствами и общественными нормами. В обоих произведениях раскрывается драматическое противостояние между индивидуальными желаниями и традициями патриархального общества, что приводит к трагической развязке. Авторы демонстрируют, как любовь становится источником страдания и одновременно символом высшей жертвы. Анализ подчеркивает универсальность поднятых тем, таких как любовь, честь, долг и свобода выбора. Также рассматривается влияние шекспировской трагедии на художественную структуру «Ануш», отражающее более широкие культурные и философские параллели. Таким образом, работа раскрывает общечеловеческие ценности, лежащие в основе обоих произведений, и подтверждает их актуальность в современном контексте.

Knarik Arutyunyan, Narine Kirakosyan

**Comparative analysis of Tumanyan's "Anush" and Shakespeare's
"Romeo and Juliet"**

Conclusion

Key words and expressions: *comparative literature, love, psychology, heroines, plot, laws of life, society, patriarchal customs, universal values, suffering.*

This paper offers a comparative analysis of two seminal works of world literature: Hovhannes Tumanyan's *Anush* and William Shakespeare's *Romeo and Juliet*. Both texts center on the theme of love, presenting it as a powerful yet ultimately destructive force in the lives of their protagonists. The analysis examines the psychological depth of Anush and Juliet, highlighting how each heroine experiences profound emotional conflict as they struggle to reconcile personal desires with the constraints imposed by their respective societies. Patriarchal customs, rigid codes of honor, and societal expectations play significant roles in shaping the tragic outcomes of both narratives. Through their portrayal of love, suffering, and sacrifice, Tumanyan and Shakespeare explore universal human experiences that transcend cultural and historical boundaries. The study also considers the influence of Shakespeare's literary tradition on Tumanyan's work, illustrating how both authors use tragedy not only as a narrative device but also as a means of revealing essential truths about human nature and social order.

Քնարիկ Հարությունյան - Արուսյանի թիվ 2 հիմնական դպրոց, հայոց
լեզվի և գրականության ուսուցիչ knarik.harutyunyan.1977@mail.ru

Նարինե Կիրակոսյան - Արուսյանի թիվ 2 հիմնական դպրոց, Անգլերենի
ուսուցիչ narinekirakosyan20@gmail.com

Кнарик Арутюнян - Основная школа №2 города Абовян, учитель
армянского языка и литературы, knarik.harutyunyan.1977@mail.ru

Нарине Киракосян - Основная школа №2 города Абовян, учитель английского языка, narinekirakosyan20@gmail.com

Knarik Harutyunyan - Abovyan Basic School No. 2, Armenian Language and Literature Teacher, knarik.harutyunyan.1977@mail.ru

Narine Kirakosyan - Abovyan Basic School No. 2, English Teacher narinekirakosyan20@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 29.05.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 13.06.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.